

ՀՈՎԱՏԱՐ ԵՂԷՔ ՁԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ

Կ'աղաչեմ, եղբայրներ, անյոյս չկորսելիք եւ չմնաք մեր մեռելութեան մէջ, որովհետեւ ամենասքանչելի յարութեան յոյսը ունինք, մանաւանդ ինք իսկ յարութիւն տուողը՝ Յիսուսը: Եւ քանի Յիսուսի բարեկամ մեր հոգին մեղքերով մեռած է, ինչպէս Ղազարոսը (Տէս Յովհ. 11.17-45) խոստովանութեամբ գԱյն կանչենք եւ Ան կը մօտենայ ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ: Անոր առջեւը իյնանք, ինչպէս Ղազարոսին քոյրերը: Աղաչենք, արտասուենք եւ ըսենք. Տէր, եթէ հոս ըլլայիր քու օգնութեամբ մեր հոգին չէր մեռնեւ. եւ եթէ ըսէ ո՛ր դրիք գայն, ըսենք՝ Տէ՛ր, եկուր եւ տես: Գիտեմ եւ կը հաւատամ, որ ան ստուգիչ կու լայ, որովհետեւ խնամոտ է եւ գթած: Եթէ մարմինը մեռած տեսնելով լացաւ, իսկ երբ հոգին մեռած տեսնէ որքա՛ն աւելի պիտի ցաւի: Զկայ ուրիշ բան մը որ այնպէս վշտացնէ մեր Տէրը, ինչպէս մեղքերէ մեռած եւ նեխած հոգին, որովհետեւ ան կը կարեկցի մեր բնութեան, եւ իր աստուածութեամբ խնամոտ ու մարդկութեամբ մեզի մօտիկ ըլլալով մեր բոլոր նեղութիւններն ուցաւերը իրը կը համարէ: Եթէ ըսէ վերցուցէք վէճը՝ չարիքներու ծանրութիւնը, թող ոչ ոք հրամանին նկատմամբ ծոյլ գտնուի եւ ըսէ՝ հոտած է այլեւս, որովհետեւ ամենագէտ բնութիւնը ըլլալով ինք գիտէ ատիկա: Ամէն ինչ Անոր յանձնենք, միայն վէճը վերցնեն խոստովանութեամբ եւ Ան կը ձայնէ դո՛ւրս եկուր, ոչ թէ չորս օրուայ գերեզմանէն, այլ մեղքի դժոխքէն բազմեայ մեր մեռած հոգին: Եւ մենք ներս չմնանք, այլ՝ անմիջապէս դուրս ելլենք եւ ոտքի կապանքներն ու պատանքները քակենք:

ՄԵԾ ԳՎԱՌՅ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

ԱՆՍԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահոց երրորդ Կիրակին կը կոչուի Անառակի Կիրակի, որովհետեւ նոյն օրը Ճաշու Աւետարանի ընթերցման պահուն կը կարդացուի Անառակ որդիին առակը Ղուկաս Աւետարանէն 15.11-32:

Յիսուսի գեղեցիկ եւ իմաստալից առակներէն մին է ասիկա, որ խօսեցաւ երբ Փարիսեցիները եւ Օրէնքի ուսուցիչները կը բնադատէին զինք, թէ ինչպէս ան մաքաւորներն ու մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ նաշի կը նստի:

Անառակ որդին զիս կեանք մը ապրելով՝ ամէն ինչ կորսնցուց, եւ երբ իր ինքնագիտակցութիւնը զինք գոչումի առաջնորդեց եւ տուն վերադարձաւ, գթասիրտ հայրը զինք ուրախութեամբ ողջունեց, եւ անոր հետ գիրկընդիստնուեցաւ, որովհետեւ ան կորսուած էր՝ գտնուեցաւ, մեռած էր՝ ողջնցաւ:

Այս առակին ուրուագծումը ինքնին կը բացայայտէ, թէ ինչպէ՛ս մարդկային տկար բնութեան անկումին դիմաց, հայրական գթասիրտ կեցուածքն է, որ կը ծաղկի:

Քրիստոսի Մարդեղութեան Խորհուրդի առաջնութիւնն էր մեղաւորները դարձի բերել, անկեպնները վերականգնել, կեանքի յորձանքներուն մէջ ինկած յուսահատներուն յոյս շնորհել, եւ այս բոլորին նառագայթող օրինակն էր Անառակ Որդիին առակը, որուն դիմաց կարկամեցան Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, որոնք փորձած էին բնադատել Քրիստոսի հայրական ներող կեցուածքը, որ կու գար յեղաշրջելու մարդկային մտածողութիւնը եւ դէպի յաւիտեանակնութիւն առաջնորդող՝ նոր ցանապարհ մը բանալու մարդուն դիմաց:



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՊ.119.105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 5 ՄԱՐՏ 2023

ԹԻՒ 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 54.11-55.13: Բ. Կր. 6.1-7.1: Ղկ. 15.1-32

Ա. ԲԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԳՈՒԿԱՄԻ 15.1-32

Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. "Հայր, բու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի": Եւ հայրը իր գաւակներուն միջու բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսիեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ, որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ եւ հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.– Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ, այլեւս արժանի չեմ բու որդիդ կոչուելու: Զիս նկատէ՛ բու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գնաց վագելով դիմաւորեց գայն, վզին փաթորեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ, այլեւս արժանի չեմ բու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէ՛ք յաւազոյն պատմունկներ եւ հագցուցէ՛ք իրեն: Մատանի անցուցէ՛ք իր մատին եւ կօշիկ տուէ՛ք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթք, մորթեցէ՛ք, ուտենէ՛ք եւ ուրախանանէ՛ք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ եւ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան իրախնայանքի:

Մինչ այդ, երեց գաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՛նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթք մորթեց»: Երեց գաւակը գայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց, որ ներս մտնէ:

Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ, ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մի՛նչդեռ, երբ բու այդ որդիդ եկաւ, որ բու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսիեց, պարարտ հորթք մորթեցիր անոր համար»:

Հայրը ըսաւ. «Տղաս՛, դուն միշտ ինծի հետ եւ եւ ամբողջ ունեցածս բու կը տակայն հիմա պէտք է ուրախանանէ՛ք եւ ցնծանէ՛ք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԿԻՐԵՂ ՐԱՅՐԱՊԵՏ



Վարդապետ եկեղեցւոյ: Ծնաւ 315-ին Երուսաղէմի մօտերը, քահանայ ձեռնադրուեցաւ 345-ին, պատրիարք ընտրուեցաւ 350-ին: Իր առաքինակրօն կեանքին եւ իմաստութեան համար սիրելի դարձած էր ուղղափառներուն եւ նոյնիսկ չարափառներուն, այսինքն՝ արիոսեանց: Բայց պատրիարքական աթոռ ելլելէ առաջ, երբ ըմբերանեց այս վերջինները, անոնք հակառակութեամբ լեցուեցան իր դէմ: Այն հակառակութեան հետեւանքովն էր, որ անգամ մը գահընկեց եղաւ, եւ յետոյ նորէն դարձաւ Երուսաղէմ, Յուլիանոս Ուրացոյի ատեն, որուն հրէից Տաճարը վերաշինելու անմիտ ձեռնարկին ակնատես իսկ եղաւ: Արիոսականները յաջողեցան վերստին ձգել զինքը իր Աթոռէն, որուն վրայ վերջապէս վերահաստատեց յետոյ զինքը Կ. Պոլսոյ ժողովը:

Իր օրով տեղի ունեցաւ Ս. Խաչին հրաշալի երեւումը Երուսաղէմի մէջ, որուն համար ծանուցանող նամակ մը ուղղեց Կոստանդ կայսեր:

Իր հոգեւոր գործունէութեան ամենէն փայլուն եւ արդիւնաւոր կողմերէն մին եղաւ ի քրիստոնէութիւն դարձր բազմեքամ հեթանոսներու, որոնք իր ձեռքէն կ'ընդունէին քրիստոնէութիւնը:

Այս առթիւ իսուած իր քարոզները, որոնք քրիստոնէական վարդապետութեան սքանչելի սկզբունքները կը պարունակեն, մեծ մասամբ ամփոփուած են «Կոչումն ընծայութեան» հատորին մէջ, որ ոսկեդարեան թարգմանութեամբ վերածուած է հայերէնի:

Թարգմանուած է նոյնպէս Կոստանդ կայսեր ուղղած իր նամակը: Իսկ աւանդութիւնը Երուսաղէմի Ս. Յակոբեանց եկեղեցիի Ս. Ստեփանոս մատրան մէջ կը ցուցնէ աւագանը, որուն մէջ Ս. Կիրեղ մկրտած էր երախայից բազմութիւն մը:

Բարի անուանակոչութիւն Կիրեղ անուն ունեցող հայորդիներուն, արեւշատ օրեր կը մաղթենք:

### ԱՂՕԹՔ

Տէ՛ր, վտակներու աղբիւր բխեցո՛ւր զլուխէս եւ ոռոգե՛ մտքերու անդաստանը, լուս՛ յանցանքներու աղտը ու սրբե՛ վերքերու թարախը, հանե՛ մեղքերու փուշը եւ տնկե՛ կեանքի բոյսը: Տէ՛ր, աճեցո՛ւր արդարութիւնը եւ նուաստացո՛ւր անօրէնութիւնը, մեռցո՛ւր մարմնի ցանկութիւնը եւ նորոգե՛ հոգիս կենդանութիւնը:

# ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

## ԻՆՉՊԷ՛Ս ԱՃԻԼ ՀՈԳԵՒՈՐՎՊԷՍ

Քրիստոսը իր կեանքին մէջ ընդունող մարդը իր հոգեւոր կեանքին մէջ տեղաշալ պէտք չէ ընէ: Եթէ տեղաշալ ընէ, այլ 31 խօսքով, եթէ չաճի իր հաւատքին մէջ, եթէ չհասուննայ Աստուծոյ հետ իր սիրայիլի ու սուրբ յարաբերութեան մէջ, այդ կը նշանակէ, թէ իր հոգեւոր կեանքը սխալ ընթացքի մէջ է, նման պարագայի, պէտք է դիմէ իրմէ աւելի հոգեւոր փորձառութիւն ունեցող անձի մը խորհրդատուութեան: Միայն եկեղեցի երթալով, Սուրբ Հաղորդութիւն առնելով եւ պատարագի մասնակցելով չենք աճիր: Աճելու համար խիստ անհրաժեշտ են երեք բաներ.

- (1) Աղօթքով ամէն օր մենիկ պահ մը անցնել Աստուծոյ հետ:
- (2) Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ Ս. Գիրքի ընթերցում կատարել:
- (3) Հետեւիլ հոգեւորապէս աճած ու փորձառու անձի մը թելադրութիւններուն:

### ՊԱՇՏՈՂՈՒԹԻՒՆ

Պահեցողութեան շնորհիւ էր, որ մեր երանելի հայրերը առաքինի դարձան եւ անմարմին հրեշտակներու կեանքը մարդկային մարմնի մէջ ապրեցան. երկրի վրայ իրենց երկրաւոր ցանկութիւնները սպաննեցին եւ իրենց հոգիները երկինքի մէջ ապրեցուցին: Մերժեցին անցաւոր հաճոյքները, ստանալու համար անանցանելի բարիքները:  
(Յովհան Մանդակունի)

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

## ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱՍԻՆ

### ԿԸ ԽՈՐՀԻՍ,

### Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 45

### ԱԼԷՈՒԻԱ ԱԼԷԼՈՒԻԱ

Միտքս գեղեցիկ մտածումներով կ'եռայ, լեզուս արագագիր քարտուղարի մը գրիչին պէս կը սահի, այս տողերը ընծայելու համար թագաւորին: Գեղեցկութեամբ գերագանց ես բոլոր մարդոց մէջ: Շնորհք կը կաթի շրթներդ: Իրաւամբ Աստուած քեզ օրհներ է յաիտեան: Կապե՛ սուրը մէջքիդ, ո՛վ դուն հօգօր, նշանակը քու մեծ փառքիդ ու վայելչութեանդ: Լարե՛ յաջորդութեանդ աղեղը, հեծի՛ր կառքդ՝ պաշտպանելու համար ճշմարտութիւնը, հեզութիւնն ու արդարութիւնը, եւ թող աջդ սքանչելի յաղթանակներ ապահովէ: Մրուած նետդ, հօգօր թագաւոր, թշնամիներուդ սիրտը թող մխուի, ժողովուրդները ոտքերուդ իյնան: Զու աթոռդ, ո՛վ Աստուած, յաիտեանական է, թագաւորական իշխանութիւնդ արդար իշխանութիւն է: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա, թէ ինչու Աստուած, քու Աստուածդ, ուրախութեան իւղով օժեց քեզ, բոլոր թագաւորներէն վեր կարգելով: Չմոռս, հալուէ եւ կասիա կը փորեն զգեստներդ, լարաւոր նուագարանները քեզ կ'ուրախացնեն փղոսկրազարդ պալատիդ մէջ:

### ԸՆԹԵՐՅԵԼ ՍԱՂՄՈՍ